ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 25

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

08.10.2018թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ

Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ

Ն.Սարգսյանը - գլխավոր քարտուղար

Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի տեղակալ

Ա.Բեջանյանը, Ս. Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Ադլոյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական

Մ.Կիրակոսյանը - մարզպետի օգնական

Գ.Սաղաթելյանը -մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին

/Զեկ. Ն.Սարգսյան/

2. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին

/Զեկ. Ա.Ղուկասյան, Ս.Սարուխանյան/

3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին

/Զեկ. Ա.Բեջանյան/

4. Հանրակրթության ոլորտում կատարվող աշխատանքների մասին

/Զեկ. Ա.Մատինյան/

5. Լոռու մարզի չորս համայնքներում կայանալիք ընտրությունների նախապատրաստական աշխատանքների մասին

/Զեկ. Դ.Մանուչարյան/

6. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին:

/Զեկ. Գ. Հակոբյան/

7. Այլ հարցեր

Հանձնարարվեց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել և աջակցություն ցուցաբերել մարզի այն համայնքների ղեկավարներին, որտեղ հրատապ ծրագրերի ֆինանսավորման հետ կապված անհրաժեշտ է իրականացնել բյուջետային փոփոխություններ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Ա.Մատինյանին, աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների բաժնի պետ Ա.Եղիազարյանին՝

Համատեղ աշխատանքներ իրականացնել մարզի հանրակրթական դպրոցներում պարտուսից դուրս մնացած աշակերտների հայտնաբերման, նրանց ուսումնական հաստատություններ վերադարձնելու ուղղությամբ և ներկայացնել վերջնական տեղեկատվություն:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99/